

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ:**

1. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 10-ից 25-ը առցանց եղանակով՝ phs.iuniversity.am հղման միջոցով:
2. Դիմորդները լրացնում են էլեկտրոնային դիմում-հայտ կցելով համապատասխան փաստաթղթերի լուսապատճենները՝
 - 1) էլեկտրոնային լուսանկար,
 - 2) 9-րդ դասարանի ավարտական վկայականի,
 - 3) անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի, կամ ծննդյան վկայականի),
 - 4) ծնողի անձնագրի:
3. Գիտելիքների ստուգման համար նախատեսված թեստերը կազմված են 28 առաջադրանք մաթեմատիկայից և 12 առաջադրանք ֆիզիկայից, գումարային 40 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր: Առաջադրանքների լուծման համար դիմորդին տրվում է 2,5 ժամ:
4. Դիմորդների գիտելիքների ստուգումը իրականացվելու է օգոստոսի 4-ին, 5-ին և 6-ին՝ ժամը 9:00-ին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի մարզահամալրում՝ 21-րդ մասնաշենքում :
5. Դիմորդները առաջադրանքների լուծման արդյունքները լրացնում են ծածկագրված ձևաթերթում:
6. Դիմորդները գիտելիքների ստուգմանը ներկայանում են նշված ժամին համապատասխան ներկայաթերթով: Ոչ հարգելի պատճառով ուշացումով ներկայացած դիմորդները զրկվում են գիտելիքների ստուգման և ընդունելության մրցույթին մասնակցելու իրավունքից:
7. Դիմորդների գիտելիքների ստուգման լսարանները և նստատեղերը որոշվում է վիճակահանությամբ:

8. Նախնական ցուցում-բացատրություններից հետո դիմորդին տրվում է համապատասխան թեստային տարբերակը և նշվում է ժամանակը:
9. Քննասենյակներում հսկողությունն իրականացնում են ընդունող հանձնաժողովի անդամները և ավագ դպրոցի տնօրենի կողմից նշանակված աշխատակիցները:
10. Դիմորդների գիտելիքների ստուգումը իրականացվում է 20 միավորանի համակարգով, դրական են համարվում 8 ութ և ավել միավորները: Դրական գնահատված դիմորդները մասնակցում են ընդունելության մրցույթին:
11. Դիմորդների գիտելիքների ստուգման և ընդունելության մրցույթի արդյունքները ընդունելության կենտրոնը հրապարակում է (համալսարանի պաշտոնական կայքում և հայտարարությունների համար նախատեսված վայրում) սահմանված առարկաներից գիտելիքների ստուգման վերջնաժամկետի հաջորդ օրը առավոտյան 11:00-ին:
12. Դիմորդները՝ ընդունելության մրցույթի հրապարակման պահից 24 ժամվա ընթացքում կարող է դիմում-բողոք ներկայացնել առցանց համապատասխան հասցեով կամ ընդունող հանձնաժողովին գրավոր եղանակով, որի պատասխանը կարող է ստանալ 1 աշխատանքային օրվա ընթացքում: